

ԱՍՍԱ ԱՍՏՐՅԱԾ ԴԴ ԳԱԱ Արվեստի հնատիտուտ

ՀԱՅՐԵՆԻ ՇՈՒԾՎԱ ԿԱՐՈՏԸ ՄՐՏՈՒՄ (Գրիգոր Սյունիի ծննդյան 130-ամյակի առթիվ)

Հայ երաժշտության պատմության մեջ իրենց ուրույն տեղն ունեն «Անդրկովկասի կոնսերվատորիայի»՝ Շուշվա երաժշտական միջավայրի ծնունդ կոմպոզիտոր-խմբավարներ և երաժշտական-հասարակական գործիչներ Դամիել Դազարյանը (1883-1958), Եղիշե Բաղդասարյանը (1881-1919), Ստեփան Դմբուրյանը (1872-1934)... Նրանց շարքում է Գրիգոր Սյունի կեղծանունով հանդես եկած Գրիգոր Միրզայանը (1876-1939), որն իր ստեղծագործությամբ և, ի մասնավորի, ժողովրդական երգերի մշակմամբ զգալի դեր կատարեց հայ պրոֆեսիոնալ երաժշտության ազգային ոճի բյուրեղացման գործում:

Մելիքների տոհմից էր սերում Գրիգորի պապի հայրը՝ Մելիք Ջովհաննես Միրզաբեկյան-Սյունին, նույն ինքը՝ աշուղ Թեյմուրը, որը Պարսից Ֆարալի շահի հրավերով երկար տարիներ անց էր կացրել պալատում, երգել ու հեղինակել բազմաթիվ պարսկական թեսնիֆներ: Շարունակելով հոր արվեստը, Թեյմուրի զավակներից մեկը շուտով Խնձորեսկից տեղափոխվում է Շուշի, դառնում աշուղ Դադասի Սյունեցի, այնուհետև՝ Աթարեկ: Դադասու որդիներից Ջովհաննեսը՝ ժողովրդական բանաստեղծ-երգիչ և մանրանկարիչ, աշուղ Վարանդեցին, ամուսնանում է Աննա Ջախունցի հետ: Ամուսնները մեկը մյուսի ետևից կորցնում են իրենց տասնչորս զավակներին՝ դեռևս մանուկ հասակում: Որդեկորույս հոր, արդեն նավթարդյունաբերության ու պղնձարդյունաբերության ասպարեզի խոշոր սեփականատեր դարձած մեծահարուստ Վանի բեյի մեծագույն երազանքն էր զավակ ունենալը: Եվ ահավասիկ, Աստծո կամոք, 1876-ի սեպտեմբերի 10-ին Գանձակի (հետագայում՝ Կիրովարադ) զավասի Գետարեկ գյուղում ծնվում է նրա տասնինգերորդ զավակը՝ Գրիգոր Ջովհաննես Վարանդեցի Դադասի Միրզաբեկյան Սյունին: Երկու տարի անց Սյունիների ընտանիքը բնակություն է հաստա-

տում Շուշիում: Տագնապած նորածնի առողջական թույլ վիճակով և նախորդ երեխաների դժբախտ ճակատագրով, Գրիգորի ծնողները յոթ տարի շարունակ դիմում են տարբեր գուշակների և կատարում նրանց թելադրանքները: Առողջ մեծացած Գրիգորի 7-ամյակը հայրը նշում է անմախադեալ ծոխությամբ. այդ օրը նա որդուն նվիրում է իր ծեռքով պատրաստած դափն ու սուրբ և ասում՝ «...առ այս դաֆը և երգե ամեն անգամ, որ սիրտդ նեղանա և սրտիդ ցավերը փարատին: Իսկ երբ մեկը քեզի ցավ պատճառ և կամ Վրայ բռնանա, առ այս սուրբ և կուրծքը խրե... բայց, որդի՛, տե՛ս որ այս դաֆն ու սուրբ պարապ ժամանցներու կամ խենթ նպատակներու համար չի գործածես»¹:

Սերելով աշուղների տոհմից, օժտված լինելով հնչեղ ձայնով ու երաժշտական վառ ընդունակություններով, Գրիգորը, բնականաբար, վաղ հասակում տարվում է երաժշտությամբ: Նրա մանկության տարիներն անցնում են Շուշի քաղաքում, որտեղ և ստանում է տարրական կրթությունը: Սակայն շատ շուտով նա կորցնում է հորը և որպես երգիչ ժողովրդական երաժիշտներ Արտեմի ու Բալայի հետ թափառում գյուղից գյուղ: Փորձելով հարստացնել երաժշտության ասպարեզում իր գիտելիքները, Սյունին ինքնուրույն ծանոթանում է նոր հայկական ձայնագրությանն ու յուրացնում կատարելապես:

1891-ին նա ընդունվում է Եջմիածնի Գևորգյան ծենարան և աշակերտում Քրիստովի Կարա-Մուլրզային, ծանոթանում դեռևս ուսանող Կոմիտասի հետ, նրանց ազդեցությամբ տոգորվում անհուն սիրով առ հայ ժողովրդական երգը: Սյունին Արմենակ Շահմուրայյանի հետ դառնում է երգչախնքի մենակատար. «Միրզայանն ուներ շատ քաղցր, երազուն, քնքույշ արևելյան ձայն մը: Դժբախտաբար այդ երազուն ձայնը դատապարտված էր ապագային կորսվելու...», - հետագայում, անդրադառնալով իր ծենարանական տարիներին, «Ինքնակենսագրության» մեջ արձանագրելու է Ա. Շահմուրայյանը²: Դեռևս ծենարանում ուսանելու ժամանակաշրջանում Սյունին ծեռնամուխ է լինում հայկական ժողովրդական երգերի գրառմանը, հավաքմանն ու ներդաշնակմանը՝ այդ ասպարեզում հասնելով նկատելի հաջողությունների: Վիճակը նետված է. Սյունին կայացնում է իր համար ճակատագրական որոշում՝ նվիրվել

¹ Յ. Բրուտյան, Արցախյան ոգին երաժշտության ծիրի մեջ, Երևան, 2000, էջ 105:

² Արմենակ Շահմուրայյան, Երևան, 1998, էջ 24:

իայ երաժշտությանը: Քր. Կարա-Մուրզան պատաճուն խորհուրդ է տալիս չքավարարվել ձեռք բերած գիտելիքներով և երաժշտական մասնագիտական կրթությունը շարունակել Թիֆլիսում, Մոսկվայում կամ էլ՝ Պետերբուրգում: Այնուհետև երաժշտական-տեսական իր գիտելիքների պաշարը Սյունին հարստացնում է՝ կարծ ժամանակ աշակերտելով Մակար Եկմայանին:

1895-ին Սյունին ավարտում է Գևորգյան ճեմարանը: Վերադառնալով Շուշի, նա կազմակերպում է երգչախումբ և համդես գալիս իր բազմաձայնած ժողովրդական երգերից կազմված առաջին համերգով: Այնուհետև նույն թվականի աշնանը, հետևելով Կարա-Մուրզայի խորհրդին, երաժշտական բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու նպատակով Սյունին մեկնում է Պետերբուրգ: Պետերբուրգի կոնսերվատորիայի ընդունելության քննություններին նախապատրաստվելու համար Սյունին ընդունվում է երաժշտական դպրոցներից մեկը, պարապում Պանչենկոյի և Կալաֆատիի երաժշտական դասընթացներում:

1898-ին նա ընդունվում է Պետերբուրգի կոնսերվատորիան և սովորում Ն. Ոհմսկի-Կորսակովի դասարանում, աշակերտում Ա. Լյադովին, Ա. Գլազունովին: Ահավասիկ թե ինչ է գրում Սյունիի պոլիֆոնիայի դասախոս, հոչակավոր կոմպոզիտոր Ա. Գլազունովը 1904-ի մայիսի 24-ին Ն. Ոհմսկի-Կորսակովին հղած նամակում. «...Քիչ մնաց մոռանայի քեզ տեղեկացնել, որ քարշ գալով եկավ Միրզոյանցը՝ կադեկադ և ձեռքը կապուտած: Առաջին իսկ խոսքերից սկսեց գանգատվել հազար ու մի հիվանդություններից, ասում էր, թե վրան մի քանի վիրակապ կա. սակայն ֆուգան գրել էր հմտորեն»¹: Ի դեպ, Սյունիի ֆուգաները պատճական խոշոր արժեք ունեցան. 1902–1904-ին ստեղծված նրա ֆուգաները դարձան արևելահայ պրոֆեսիոնալ երաժշտության մեջ այդ ժանրի առաջին նմուշները²:

Ուշագրավ են Նիկողայոս Տիգրամյանի հիշողությունները Գրիգոր Սյունիի մասին: Նրանք ծանրութացել են 1890-ական թվականներին: Այնժամ Սյունին «...մի ջահել, վառվուն ուսանող էր կոնսերվատորիա-

¹ 8. Բրուտյան, նշվ. աշխ., էջ 110:

² Դայլկական առաջին երկնական, եռաձայն և քառաձայն ֆուգաների հեղինակն է Տիգրամ Չուխանյանը:

յում և շատ սիրելի ու առաջադեմ աշակերտ էր հայտնի պրոֆեսոր ու մեծ կոմպոզիտոր Ն. Ռիմսկի-Կորսակովի: Գրիգորն իր տաղանդով ու աշխատասիրությամբ կոնսերվատորիայում աչքի ընկնող ուսանողներից էր: Նա իրու աշակերտ՝ հայտնի ֆուգիստ էր... Մենք հաճախ գնում էինք միասին գրունելու: Մի օր հեռու պարտեզում նրա գլխում հղացավ մի ֆուգայի հատված: Նոտայի թուղթ չկար հետներս: Մտտիս նամակների մաքուր երեսների վրա նա նոտագրեց իր ֆուգան: Երբ տուն վերադարձանք, քույր նվագեց. և մենք շատ հավանեցինք»¹:

Ուսումնառության տարիներին Սյունին դեկավարում է Պետերբուրգի հայկական եկեղեցու երգչախումբը, որի համերգներից մեկին՝ 1902 թ. մարտի 3-ին, նասնակցում է երգիչ Մակար Վարդիկյանը: Նա ներդաշնակում է հոգևոր երգեր, կատարում ժողովրդական երգերի մշակումներ, գրում մեներգեր և պոլիֆոնիկ ստեղծագործություններ:

1903 թվականի ամառը դեռևս Պետերբուրգի կոնսերվատորիայի ուսանող Սյունին հայրենի Շուշիում հանդես է գալիս համերգներով. ի դեպ, 1903-ի հուլիսի 31-ի համերգին իրենց օգոստոսյան համարներում անդրադառնում են «Մշակն»² ու «Տարազը»³ համապատասխանաբար «Գրիգոր Միրզայանի համերգը Շուշիում» և «Միրզայանի համերգը Շուշիում» հոդվածներով:

1904-ին Սյունին ավարտում է Պետերբուրգի կոնսերվատորիան և որպես պրոֆեսիոնալ կոմպոզիտոր վերադառնում Անդրկովկաս՝ հետայսու մշտապես գտնվելով երաժշտական–հասարակական եռուն գործունեության մեջ. աշխատում է որպես երաժշտության ուսուցիչ, կազմակերպում ինքնագործ երգեցիկ խմբեր, տալիս համերգներ, հաջողությամբ կատարում հայ ժողովրդական երգերի մշակումներ՝ դաշնամուրի նվագակցությամբ և երգեցիկ խմբի համար, գրում Ավ. Խահակյանի տեքստերով ռոմաններ, նաև՝ երաժշտություն Ղ. Աղյայանի «Արեգնազան» հեքիաթի սյուժեով թատերական ներկայացման համար: Տեղեկություններ են պահպանվել առ այն, որ հետագայում Սյունին «Արեգնազան» երաժշտությունը զարգացրել է՝ վերածելով ինքնուրույն ստեղծագործության: Պահպանվել են նաև հատվածներ «Ասլի և

¹ 8. Բրուտյան, նշվ. աշխ., էջ 111:

² Ո. Մազմանյան, Դայ երաժշտական կյանքի տարեգրություն (1901-1910 թթ.), Երևան, 2006, էջ 64:

³ Նույն տեղում:

Քյարամ» օպերայից: Չենց 1904-ին Պետերբուրգում լույս է տեսնում հայ ժողովրդական երգերի մշակումներից բաղկացած «Հայ ժողովրդական երգեր» Ա պրակը. տետրը պարունակում էր չորս երգ. «Սարերի հովին մեռնին», «Դաբրբան», «Սարեն կուգա ծիավոր», և «Օհ նազանն»: 1904-ին Պետերբուրգում լույս է տեսնում նաև Գրիգոր Սյունիի «Ախ ալ Վարդի» երգը՝ գրված Ավ. Խահակյանի խոսքերով:

Այս շրջանում Սյունին տարվում է դաշնակցության գաղափարներով և անդամագրվում ՀՅԴ-ին, գրում ու անստորագիր տարածում երգեր¹, հետագայում հրաժարվում դաշնակցության գաղափարներից, դառնում դաշնակցության համոզված հակառակորդ:

Շարունակելով Ս. Եկմայանի գործը, 1905–1908-ին Սյունին երաժշտություն է դասավանդում Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում և ղեկավարում երգչախումբը:

1908-ից Սյունին գերազանցապես թափառական կյանք է վարում. շրջագայելով Հայաստանի, Պարսկաստանի և Թուրքիայի հայարձնակ տարբեր վայրերում (Տրապիզոն, Կարին, Կրկին Թիֆլիս, Թեհրան, Կ. Պոլիս ևն, 1923-ից՝ ԱԱՆ)՝ կազմակերպում է սիրողական երգչախմբեր ու տալիս համերգներ՝ ամենուրեք հնչեցնելով հայկական երգը ի նպաստ հայ ժողովրդական զանգվածներում բազմաձայն երգեցողության տարածման: Աշխատելով Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի քաղաքներում՝ Տրապիզոնում, Սամսունում, Կիրասոնում, Էրզրումում, Բիթլիսում, Վանում, Սերաստիայում և այլուր, հանդես գալով որպես խմբավար, Սյունին հետաքրքրություն է արթնացնում հայության մեջ ազգային երաժշտության հանդեպ: Այս առումով նրա գործունեությունը հիշեցնում է Կարա-Մուրզային: Սյունին բազմաթիվ երգեր է հավաքել Սյուրմենեի, Կարատերի, Յամբոյի գետահովիտների գյուղերում բնակվող հայերի շուրթերից: Նետաքրքրական է, որ Սնբատ եպիսկոպոսը 1911-ի սեպտեմբերի 19-ին, ապա 1913-ի սեպտեմբերի 17-ին գրավոր հանձնարարականներով խնդրում է Խնուսի, Ներքելի, Բասենի թաղական խորհուրդների քահանաներին և գյուղացիներին՝ ծանոթ երաժշտագետ Սյունիին «...երգեր հաւաքելու համար, ամէն կերպ դիւրութիւն,

¹ Տե՛ս Ա. Մուրադյան, Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, Երևան, 1970, էջ 535:

օժանդակութիւն եւ յարգանք ցոյց տան եւ գոհ թողուն զինքը»¹: 5-6 տարվա ընթացքում Սյունին հավաքում է ավելի քան 500 երգ, մի քանի երգախառն պոեմներ, այդ թվում՝ «Վիթեմն ու Զին», «Հեյրան-Սեյրան»-ը: Դամշենի, ճերմելի, Տերեսիի, Թորթումի և շրջակա գյուղերում գրառած բազմաթիվ երգերից բաղկացած 2 ստվարածավալ տետրերը նա Թիֆլիսում ներկայացնում է բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանին. ցավոք, այդ նյութերը չիրատարակվեցին և հավանաբար կորսվեցին անհետ, ինչպես նախորդ 500 երգերը և այլ հոգևոր արժեքներ:

1910–1914-ին Սյունին աշխատում է երգրումի Սանասարյան դպրոցում, իսկ ամառային ամիսներին շրջում Դայաստանի տարրեր գավառներում, ձայնագրում բազմաթիվ ժողովրդական երգեր ու պարեղանակներ՝ հետագայում դրանք օգտագործելով իր երկերում:

Դընթացս առաջին աշխարհամարտի՝ 1914-ին նա վերադառնում է Թիֆլիս՝ ակտիվորեն մասնակցելով Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերության գործունեությանը: «Սիւնին երր 1914-ի աշնան՝ համաշխարհային պատերազմի հետեւանքով, երգրումէն Թիֆլիս կը փախչէր իր ամբողջ գոյքերը յանձննեց ամերիկացի միսիոնար մըսթըր Սթեփըլթընին եւ անոնք անհետ կորսւեցան հարիւրաւոր ուրիշ հայ տարագրեալներու ստացւածքներում հետ, որոնք նոյնպես այդ միսիոնարի խնամքի ու պահպանութեան տակ դրւած էին, այն յոյսով, թէ անոնց տէրերը օր նը կը վերադառնան: Ի՞նչ պատահեցաւ Սիւնիի այդ արժեքաւոր աշխատութեանց, որոնք ամբողջ կեանքի մը քրտնածան զոհողութեանց ու ճիգերում արդիւնքն էին: Այժմ Զիքակոյի մէջ հաստատուած մըսթըր Սթեփըլթըն չի յիշեր անգամ: Եթե հայ դժբախտ աքսորեալներու կահկարասիներն ու ադամանդեղեն զարդերը կրնային Աստծոյ բարեպաշտ մէկ պաշտոնեային քսակը պարարտացմել, հաւանաբար Սիւնիին թուղթերն ալ անոր խոդին պատանքն եղան: Բայց աւաղ, անոնք այլեւս գոյութիւն չունին հայ երաժշտութեան համար»²:

Շուտով համբավավոր երաժիշտը հրավեր է ստանում Դայաստանի դաշնակցական կառավարության նախարարներից, բայց քանի որ նա արդեն հիասթափվել էր դաշնակցության գաղափարական դիրքորոշումից և գործելակերպից, ուստի կտրականապես մերժելով հրավերը,

¹ Յ. Բրուտյան, նշվ. աշխ., էջ 107:

² Յ. Գոյումճեան, Գրիգոր Մ. Սիւնի, Ֆիլադելֆիա, 1948, էջ 141–142:

մեկնում է իրան, որտեղ էլ ծավալում է իր հետագա բազմարդյուն գործունեությունը:

1921-ի օգոստոսին Սյունին կրկին վերադառնում է Թիֆլիս՝ այս անգամ երկարատև թափառական կյանքից ու լարված գործունեությունից վատրարացած առողջական վիճակով, տևական հանգստի կարոտ: Նույն թվականի աշնանը առողջությունը վերականգնելու ակնկալիքով և այնուհետև Հայաստանում բնակություն հաստատելու մտադրությամբ նա ընտանիքի հետ մեկնում է Պոլիս: Բայց իրադարձությունների ընթացքը նրան տանում է ԱՄՍ, որտեղ էլ անցնում է նրա հետագա ողջ կյանքը: Բնակվելով Ֆիլադելֆիայում և շրջելով ԱՄՍ հայաբնակ քաղաքներով, Սյունին շարունակում է իր երաժշտական–հասարակական գործունեությունը: Նա կազմակերպում է երգչախմբեր ու համերգներ տալիս Բոստոնում, Ուոթրբաունում, Նյու-Յորքում, Ֆիլադելֆիայում, Չիկագոյում, Դետրոյտում, Փրավիտենսում և այլուր՝ ունկնդրի կողմից արժանանալով բացառիկ ընդունելության: Համերգներից երկուսը (1924-ի հունվարի 27-ին և տասը տարի անց՝ 1934-ի փետրվարի 24-ին) շահում են միջազգային մրցանակներ: Ամերիկյան երաժշտական ընկերակցությունների կազմակերպած և ամերիկյան, ֆրանսիական, գերմանական, լեհական, չվենական, նորվեգական, նեգրական, իռլանդական երգչախմբերի մասնակցությամբ կայացած միջազգային մրցույթներում հայկական երգչախմբի հաղթանակի մասին նամուլի դրվատական արձագանքների կողքին արժեքավոր էր միջազգային 12-րդ մրցահանդեսի կազմակերպիչ միսիս Ջերիեթ Ս. Ռուզլի ուղերձը, որում նաև ավորապես ասված է. «Սիրելի պրն Սիւնի. հաճեցէք իմ շնորհաւորութիւններս ընդունիլ այն յաղթանակի համար, զոր տարիք Բ. կարգի մրցումին մէջ: Դուք բարձր գնահատութեան արժանի էք ծեր սքանչելի ելոյթին համար: Ամբողջ ծեռնարկին յաջողութեան նաև մասին բազմաթիւ շնորհաւորական նամակներ ստացած ենք:

Ներփակ կստանաք դատաւորներու որոշման ամփոփումը, որ վստահ եմ, թէ պիտի շահագրգու ծեզ: Կը յուսանք ծեզ եւ ծեր երգչախմբին հետ կրկին գործ ունենալ յառաջիկա տարւայ երգահանդեսին մէջ: Կրնաք ունետ ատեն մեզի դիմել, եթե կրնանք կերպով մը օգտակար մլալ ծեզի»¹:

1930-ի փետրվարի 19-ին Ֆիլադելֆիայում աննախադեպ հաջո-

¹ 8. Բրուտյան, նշվ. աշխ., էջ 111–112:

դությամբ Սյունին թեմադրում է հայկական և արևելյան թեմաներով գրված իր «Պայքար և զոհողություն» մանկական օպերան, որի բոլոր դերակատարները մանուկներ ու պատանիներ էին:

Սյունին Դարություն Մեհրապյանի հետ համագործակցությամբ ԱՄՆ-ում իմանում է «Ամերիկահայ երաժշտական միությունը», որն արգասարեր գործունեություն ծավալեց ամերիկահայ գաղթօջախի բարոյահոգերանական մթնոլորտի բարելավման գործում: Սակայն Դայրենիքի կարուտն աստիճանաբար կրծում էր կոնպոդիտորի հոգին:

Ի միտքարություն՝ նա հայրենիք է ուղարկում երաժշտական գործիքներ սիմֆոնիկ նվագախմբի համար, որոնց պակասն այն ժամանակ խիստ զգում էր սիմֆոնիկ նվագախումբը, Երևանի կոնսերվատորիային է նվիրում մի շարք երաժշտական գործիքներ, նորաբաց երաժշտական հրատարակչության համար անհրաժեշտ իրեր, նոտաներ, պարտիտուրների համար թղթեր...

Սյունին հիմնադրում է երաժշտական ստուդիա, ղեկավարում սիրողական երգախմբեր ու հանդես գալիս համաշխարհային մրցույթներում, գրում է և հրատարակում բանվորական-հեղափոխական երգեր և սովետահայ ժողովրդի նոր կյանքը գովերգող ստեղծագործություններ: Սակայն կտրված լինելով Դայրենիքից, իր վաղ շրջանի ստեղծագործություններում ժողովրդական երաժշտության կենդանի զգացողություն, կոնպոդիտորական տեխնիկայի բարձր մակարդակը և արտակարգ տաղանդ հանդես բերած Սյունին չկարողացավ զարգացնել ու խորացնել իր ստեղծագործությունը:

ԱՄՆ-ում ապրած տարիներին Սյունին հանդես է եկել որպես Սովետական Դայաստանի բարեկամ, եռանդուն մասնակցել ՀՕԿ-ի գործունեությամբ:

ԱՄՆ-ում անցկացրած ժամանակաշրջանում արդեն ի հայտ են գալիս մի շարք հիվանդություններ, որոնք քայքայում են առողջությունը, բայց հուսահատվելու վիխարեն, Սյունին ասում էր. «Քեփդ տեղն արա, ինծի ղարապաղցի կըսեն»¹: Սրտի տագնապ, տևական ծանր շաքարախտ, ապա՝ կոկորդի քաղցկեղ, որն էլ գերեզման իշեցրեց կոնպոդիտորին հազիվ 63 տարեկան հասակում: Վախճանվեց Սյունին 1939-ի դեկտեմբերի 18-ին, Ֆիլադելֆիայում (ԱՄՆ):

¹ Նույն տեղում, էջ 113:

Ամերիկյան մամուլը նրա մահվանն արձագանքեց բազմաթիվ ցավացական հոդվածներով: Ահավասիկ հատված Օվրբրուքի բարձրագույն դպրոցի երաժշտական բաժնի վարիչ Լուիջ Կեյզենի գրությունից՝ գրված 1939-ի դեկտեմբերի 21-ին. «Մեծ հարված էր մեզ տեղեկանալ, թե կորցրել ենք մի մեծ ու սիրելի անձնավորություն: Սյունին արտակարգ անձնավորություն էր: Միայնակ մի ամբողջ հաստատություն էր: Իսկ հիմա նա կդառնալ լեզենդ ու գեղեցիկ հիշողություն»¹: Վախճանվեց Սյունին՝ Դայրենիքում վերջին հանգրվանը գտնելու փափագով: Նրա և կոնց աճյունասափորները հասան Դայաստան 1959-ին, որդու՝ Ռուբենի միջոցով և 1968-ին «Վերջապես իր նյութեղեն հյուլեները խառնվեցին առեղծվածային Դայաստան աշխարհի նվիրական հողին, բայց ոչ իր երազած, իր պաշտած Ղարաբաղի...»²:

Ցավոք, մինչև օրս Սյունիի ստեղծագործական ժառանգությունը լրիվ հրատարակված, նույնիսկ՝ հավաքված և ի մի բերված չէ:

Նրա ժառանգությունը բաղկացած է ժողովրդական երգերի մշակումներից, հայ նշանավոր բանաստեղծների գրական խոսքի երաժշտականացումը հանդիսացող՝ ժողովրդական մեղեդիների վրա հիմնված երգերից ու ռոմաններից, թատրոնական ներկայացումների համար գրված երաժշտական կտորներից և նվագախմբային որոշ ստեղծագործություններից:

Իր գործունեության վերջին շրջանում Սյունին մշակեց բանվորական հեղափոխական երգեր («Անվախ Ծնկեր», «Դու զոհ գնացիր», «Ինտերնացիոնալ»), 30-ական թվականներին Խորհրդային Դայաստանում ստեղծված մասսայական երգերի նմանողությամբ հորինեց «Նոր կյանքի երգեր» շարքը (1934):

Դաշնամուրի նվազակցությամբ ինքնուրույն մեներգերը (Յ. Թումանյանի «Ինձ մի խնդրիր», Ավ. Խսահակյանի «Ախ, ալ Վարդի» ևն) գրված են հայ քաղաքային ժողովրդական երաժշտության ոճով, ունեն արտահայտիչ մեղեդիներ: Սրանք, ինչպես և բուն ժողովրդական երգերի մշակումները (օրինակ՝ «Նեննի» օրորոցայինը), զգալի դեր են խաղացել ազգային ռոմանսի ձևավորման ու զարգացման գործում:

Կոմպոզիտորի ստեղծագործության առավել արժեքավոր բաժինն են կազմում գեղջկական երգերի խմբերգային մշակումները, որոնցից

¹ Նույն տեղում, էջ 112:

² Նույն տեղում, էջ 113:

լավագույնները («Սարերի հովին մեռնիմ», «Սարերը հովել ա», «Ալագյազ» ևն) առանձնանում են ընդհանուր բարեհնչումությամբ և հայ խմբերգային երաժշտության դասական ժառանգության մասն են կազմում: Սյունին թե՛ խմբերգային և թե՛ մեներգային մշակումներում պահպանում է հայ ժողովրդական երգի առանձնահատկությունները՝ հասնելով ոճական անաղարտության: Նրա երգերից շատերը, այդ թվում՝ «Սարերի հովին մեռնեմ», «Սարեն կուգա ծիավոր», «Ալագյազ», «Ախ, ալ վարդի», «Եթե մի օր», «Ինձ մի խմորիր» երգերն իրենց նշտական տեղն ունեն համերգային երկացանկում:

Անդրադառնալով ազգային երաժշտարվեստում Սյունիի ստեղծագործական ներդրմանը, մեջբերենք երաժշտագետ Ալ. Շահվերդյանի կարծիքը: Բարձր գնահատելով Սյունիի ստեղծագործության սկզբուն վառ արտահայտված նրա արտակարգ տաղանդը, վաղ շրջանի գործերում ժողովրդական երգերի զգացողությունը և կոմպոզիտորական նշանակալից տեխնիկան, նաև ստեղծագործական նվաճումները, նա գտնում է, որ Սյունիին չհաջողվեց լիովին ձերբազատվել եվրոպական դպրոցի դասական օրինաչափություններից և գտնել այն ուղին, որ հետագայում հայտնաբերեց Կոմիտասը: Նրբորեն ընկալելով ժողովրդական երգերը՝ իրենց կերպարային հատկանիշներով և հուզական դրսնորմամբ, պահպանելով դրանց ինտոնացիոն և ռիթմական յուրօինակությունն ու դրսնորելով ճաշակ և հնարամտություն, միաժամանակ, երգերը ներդաշնակել-բազմաձայնելիս, ցավոք, Սյունին ձեռնպահ է մնում հայկական ծայնակարգերի հարստությունների ու առանձնահատկությունների կիրառումից՝ գերազանցապես մնալով մաժորի և դորիական մինորի սահմաններում, շրջանցում մեղեդու մեջ ամփոփված ծայնակարգային բազմազանության հենակետերը: Դայ երաժշտության բազմաձայնման հրաշալի օրինաչափություններից մեկը՝ ծայնառությունը, սրանցում գրկված է հարմոնիկ ճոխությունից: Մանրախույզ վերլուծելով Սյունիի առաջին շրջանի գործերը՝ «Տույ-տույ», «Խանաբալա», «Ալագյազ», «Մայիսն եկավ» երգերը, Շահվերդյանն ափսոսանք է հայտնում, որ մեծատաղանդ Սյունիին օրյեկտիվ պատճառներով չհաջողվեց նվաճել դարասկզբի ազգային երաժշտարվեստի բարձրագույն մակարդակը, այլ լոկ բավարարվեց Կարա-Մուրզայի արվեստը նախապատրաստողներից մեկի համեստ դերով¹: Դետագայում, Սյունիի

¹ Ա. Շահվերդյան, նշվ. աշխ., էջ 206-209:

ստեղծագործությունն ուսումնասիրած երաժշտագետ Ռ. Աբայանն առավել ընդլայնեց կոնպոզիտորի արժանիքների համայնապատկերը, ի մասնավորի արձանագրեց նրա նպաստն ազգային բազմաձայնության ասպարեզում: Հայտաբերելով Սյունիի՝ դեռևս ուսանողական տարիներին գրված շոլլ երաժայն կրկնակի ֆուգան և վելուծելով, Աբայանը նկատում է, որ Սյունին նկատելիորեն ընդարձակել է Կարա-Մուլզայի ստեղծագործական մոտեցումը հայ ժողովրդական երգի հանդեպ:

Հատկանշական է, որ հայ երաժշտարվեստին ծառայեցին Սյունու տոհմի շառավիղները նույնանու՝ զավակներից ու թռոներից ոմանք: Նրա որդին՝ **Գուրգեն Սյունի** (1910–1995) շուրջ քառասուն տարի (1940–1982) ԱՄՍ Արևելյան տարածքում (Բուստոնից Նյու Յորք և Վաշինգտոն) կազմակերպել է երգախմբեր և տարածել հայ երգը: 1971-ից համագործակցել է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հետ: «Նրա երգչախմբային ու պարային համույթները Ամերիկայի երաժշտական աշխարհում՝ Ռուբին Ջուդ Դելում և Իրվին Լարաններում, միշտ վառ են պահել հայ ազգային երաժշտության ավանդույթները», – ահավասիկ մի հատված 1995-ի ապրիլի 13-ին Ֆիլադելֆիայում լույս տեսած մահախոսականից¹:

Դաշնակահար **Մերժ Սյունի** (ծն. 1930) Գրիգոր Սյունու թոռն է, դստեր՝ Սեդա Սյունիի որդին: Իր անդրանիկ համերգով հանդես է եկել 17 տարեկանում: Ավարտել է Զուլիարդի կոնսերվատորիան, բազմաթիվ մենահամերգներով հանդես եկել ԱՄՍ քաղաքներում, իընթացս 1955-ի օգոստոսի 21-ի և 1962-ի սեպտեմբեր 15-ի, 16-ի համերգների, կատարել է Բախի և տոլլ տոկատը, Սոցարտի G dur սոնատը, Բերհովենի 21-րդ սոնատը, Պրոկոֆևի 3-րդ սոնատը, Լիստի «Պետրարկայի սոնետները» և «Մեֆիստո Վալսը», Դերյուսիի Պրելուդները, Շոպենի Պոլոնեզները, Էքսպրոմտները և վալսները, Յինդեմիտի սոնատը և այլն: Դաշնակահարը նաև ստեղծագործել է, գրել դաշնամուրային պիեսներ, երգեր, խմբերգեր, որոնք հնչել են ԱՄՍ համերգային դահլիճներում: Ս. Սյունին տարիներ շարունակ գրաղեցրել է Acorn Film-ի տնօրենի պաշտոնը, ակտիվորեն մասնակցել ազգային ծեռնարկումներին, 1960-ին դեկավարել «Անուշ» օպերայի բեմադրությունը՝ իրականացված Նյու Յորքի Հայկական առաջնորդարանի նախաձեռնությամբ:

¹ Յ. Բրուտյան, նշվ. աշխ., էջ 114:

² Տե՛ս նույն տեղը, էջ 115-116: